ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

147
(2627)

18 հոկտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 114

Ընդամենը ամիսներ առաջ՝2022 թվականի հունիսի 15-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից կրկին հայտարարություններ արեց, որոնք այնուհետեւ իրականություն այդպես էլ չդարձան: Մասնավորապես, ԱԺ ամբիոնից նա հայտարարում էր, թե ինչու են իրեն մեղադրում Արցախին միայնակ թողնելու համար՝ հայտարարելով, թե դա սուտ է: Եվ, որպես ապացույց, նա բերում էր այն հանգամանքը, որ 2021-2022թթ. Արցախի բյուջեն եւ ՀՀ կառավարության բյուջետային աջակցությունն Արցախին հասել է աննախադեպ մեծության: «2019-ին Արցախի բյուջեն կազմել է 117.9 մլրդ դրամ, որն ամենաբարձրն է եղել մինչպատերազմական ողջ շրջանում, այսինքն՝ 90-ականներից սկսած: Այս գումարից 57.8 մլրդ դրամը Հայաստանի կառավարությունն է վճարել: 2021-ին արդեն Արցախի բյուջեի եկամտային մասը եղել է 174 մլրդ դրամ, որից 128 մլրդ դրամը ՀՀ վճարած գումարն է: Այսինքն՝ հետպատերազմական շրջանում Արցախի բյուջեն պատմական ամենաբարձրն է եղել, Արցախը երբեք ավելի մեծ բյուջե չի ունեցել, եւ ՀՀ-ն երբեք ավելի մեծ ծավալով Արցախին աջակցություն չի ցուցաբերել: Այսինքն՝ ՀՀ աջակցությունն Արցախին 2021 թվականին աճել է 122 տոկոս՝ 2019-ի համեմատ, կամ 70 մլրդ դրամով, իսկ Արցախի բյուջեն ընդհանուր առմամբ աճել է 48 տոկոսով կամ 45 մլրդ դրամով»,- ասաց Փաշինյանը: Սակայն ամիսներ անց մենք բախվում ենք մի իրավիճակի, երբ Հայաստանն իսկապես Արցախին միայնակ է թողել եւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանի շուրթերով հայտարարել, որ հենց Արցախը պետք է բանակցի Ադրբեջանի հետ ուղիղ: Անգամ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ մատնանշվում է, որ ՀՀ-ն է Արցախի անվտանգության երաշխավորը: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը թեեւ արդեն աշխատանքի է անցել, բայց քաղաքացիական հասարակության համայնքի ներկայացուցիչներն ու իրավաբանները շարունակում են պնդել՝ նրա պաշտոնավարումը հակասում է ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին: Հովակիմյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի մտերիմն է ու կուսակցական գործունեությունը անկախ հանձնաժողով գործուղվելուց օրեր առաջ է դադարեցրել. եթե խորհրդարանում ինքն իրեն չընտրեր, այդ պահին ստեղծված իրավիճակի դասավորվածությամբ՝ ԿԸՀ նախագահ չէր ընտրվի: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԿԸՀ անդամների ընտրության օրն ԱԺ-ում Հովակիմյանի ու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի միջեւ խոսակցություն է եղել: «Այդ օրն ԱԺ-ում 67 ՔՊ-ական պատգամավոր կար, որոնցից 2-ը Կոնջորյանին խնդրել են անձնական գործերով լքել ԱԺ-ի շենքն ու չմասնակցել ԿԸՀ անդամների քվեարկությանը: Կոնջորյանն Հովակիմյանից հետաքրքրվել է՝ բավականացնում են արդյոք ՔՊ պատգամավորների ձայները, եթե ԱԺ-ում կան ընդամենը 65 պատգամավորներ: Հովակիմյանն ասել է, թե խնդիր չի լինի, ինքն իրեն քվեարկի, եւ 65 հոգին կլրանան»,- պատմեց ՔՊ-ամերձ մեր աղբյուրը: Պատգամավոր Վահագն Հովակիմյանը քվեարկել է ԿԸՀ նախագահի թեկնածու Վահագն Հովակիմյանի օգտին՝ առաջացնելով հակասահմանադրական իրավիճակ: Հիշեցնենք, որ Հովակիմյանի՝ ԿԸՀ նախագահի ընտրվելու հարցը «Պատիվ ունեմ» խմբակցության նախաձեռնությամբ առաջիկայում Սահմանադրական դատարանում կվիճարկվի:

Իրավապահ համակարգի մեր աղբյուրների փոխանցմամբ՝ տեւական ժամանակ է, ինչ բավականին հետաքրքիր գործերով իրավապահների ուշադրության կենտրոնում է Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի նախագահ Հայկ Հովհաննիսյանը, որը հանդիսանում է Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի մտերիմը: Մեզ ակնարկեցին, որ Հովհաննիսյանը քաղաքապետի հովանավորյալն է, եւ այդ կապերը եղել են դեռեւս այն ժամանակվանից, երբ Սարգսյանը Երեւանի քաղաքապետի տեղակալն էր եւ համակարգում էր նաեւ Մետրոպոլիտենի աշխատանքը: Մեզ փոխանցեցին, որ օպերատիվ աշխատանքների արդյունքում հավաքված տեղեկությունները, մեղմ ասած, բավականին ուշագրավ են եղել, սակայն ինչ-ինչ պատճառներով ակտիվ գործողություններ չեն իրականացվել: Մեր այն հարցին, թե ինչպիսի հնարավոր չարաշահումներ են՝ կոռուպցիա, հովանավորչություն, թե այլ, պատասխանեցին, որ հարցականները, առերեւույթ հանցագործությունների կամ դրանց ռիսկերի շրջանակը բավականին լայն է, ու ավելի կոնկրետ տեղեկություններ կտրամադրեն ավելի ուշ: Քաղաքապետարանի մեր աղբյուրները, թեմայի շուրջ կատարված հարցումներին ի պատասխան, նշեցին, որ Հայկն ու Հրաչն այն աստիճանի մտերիմ են, որ Հայկ Հովհաննիսյանի կինը՝ Իսկուհի Օսիպյանը, զբաղեցնում է քաղաքապետարանի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Դժվար չէ կռահելը, որ հսկայական ֆինանսական հոսքեր կառավարող այդ վարչությունը պետք է ղեկավարի քաղաքապետի ամենամտերիմ մարդկանցից մեկը: Ի դեպ, հայտնի դարձավ նաեւ, որ Հայկ Հովհաննիսյանը վերջերս սկսել է հաճախ լինել Միացյալ Էմիրություններում՝ Դուբայում: Ինչեւէ, սպասենք դեպքերի հետագա ընթացքին:

Հայաստանի Բարձրագույն դատական խորհրդում արշալույսները խաղաղ չեն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ լարված են ԲԴԽ անդամ, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբոր՝ Դավիթ Խաչատրյանի եւ ԲԴԽ նորանշանակ նախագահ Կարեն Անդրեասյանի հարաբերությունները: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ հոկտեմբերի 7-ին նախագահ է ցանկացել դառնալ նաեւ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատրյանը: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ այդ օրը Դավիթ Խաչատրյանի նշանակմանը կողմ են եղել երեք դատավոր անդամներ, իսկ մյուսներն իրենց ձայնը տվել են կառավարությունից ԲԴԽ գործուղված Կարեն Անդրեասյանին: Այս եւ այլ գործոններն էլ հենց պատճառ են դարձել, որպեսզի ԲԴԽ-ում լարված մթնոլորտ ձեւավորվի: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 10-ին, իր սկանդալային բովանդակությամբ դիմումի համաձայն, ԲԴԽ անդամի պաշտոնից հրաժարական տվեց Գրիգոր Բեքմեզյանը՝ հայտարարելով. «Վերլուծելով վերջին մի քանի ամսվա իրադարձությունները, նաեւ վերջին մեկ շաբաթվա գործընթացները՝ համոզվեցի, որ Բարձրագույն դատական խորհուրդը այլեւս այն խորհուրդը չէ, որը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Դատական օրենսգրքով»: ԲԴԽ-ում ստեղծված անառողջ մթնոլորտի, ինչպես նաեւ Սասուն Խաչատրյանի եղբայր Դավիթ Խաչատրյանի հետ ունեցած լարված փոխհարաբերությունների մասին մեկնաբանություն խնդրեցինք անձամբ Կարեն Անդրեասյանից: «Չեմ մեկնաբանում»,- հակիրճ ասաց պարոն Անդրեասյանը: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 6-ին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված արդարադատության նախկին նախարար Կարեն Անդրեասյանն Ազգային ժողովում ընտրվեց ԲԴԽ անդամ: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 7-ին, Անդրեասյանը արդեն ԲԴԽ-ում կայացած գաղտնի քվեարկությամբ ընտրվեց Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախագահ:

ԿՈՂՄՆԱԿԱԼ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԵՐՁԱՎՈՐԸ՝ ԿԸՀ ՆԱԽԱԳԱՀ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր՝ մոտ տասն օր առաջ ընտրված անդամներից Վահագն Հովակիմյանը, ինչպես սպասվում էր, ստանձնել է ԿԸՀ նախագահի պաշտոնը: Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորը, որ խորհրդարանի Պետական-իրավական մշտական հանձնաժողովի փոխնախագահն էր, ԿԸՀ քաղաքական թիմի որոշմամբ է գնացել: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որ ԿԸՀ արդեն նախկին նախագահ Տիգրան Մուկուչյանին ամենատարբեր բնորոշումները, ընդհուպ՝ նախկին իշխանությունների «նկարիչ» բնորոշումն էր տալիս, այժմ, ըստ երևույթին, մոռանալով նախկինում արած սուր քննադատությունը, Հովակիմյանի մասով ձայն-ծպտուն չի հանում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Պատիվ ունեմ» խմբակցության անդամ Թագուհի Թովմասյանն ասել էր, որ Հովակիմյանի՝ ԿԸՀ նախագահ լինելու հարցը խմբակցությունը ՀՀ Սահմանադրական դատարան կվիճարկի: «ԱԺ-ում Էթիկայի հանձնաժողովի ստեղծումը ոչինչ չի տալու: Այս պահին մեր իրավաբանները աշխատում են դիմումի վրա: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժողովրդավարական ցանկացած երկրում ամենակարեւոր ինստիտուտներց մեկն է, որի ձեւավորումը չպետք է խնդրահարույց լինի կամ կասկածներ առաջացնի: Եթե Վահագն Հովակիմյանն ինքն իրեն չընտրեր, այդ պահին իրավիճակի դասավորվածությունն այնպիսին էր, որ Վահագն Հովակիմյանը չէր ընտրվելու ԿԸՀ նախագահ»,- ասել էր Թովմասյանը:

Հովակիմյանի ընտրությունը նաեւ հասարակական կազմակերպություններին է անհանգստացրել: «Խստորեն դատապարտում ենք իշխող քաղաքական կուսակցության կողմից ԿԸՀ նախագահի պաշտոնում կուսակցական անդամին նշանակելու մոտեցումը եւ պահանջում ենք վերանայել առաջադրումը»,- մինչեւ ԿԸՀ անդամների ընտրությունը նման բովանդակությամբ հայտարարություն էին տարածել մի շարք ՀԿ կազմակերպություններ: Իսկ արդեն խորհրդարանում ընտրություն կազմակերպելուց ու Հովակիմյանին ԿԸՀ նախագահ ընտրելուց հետո ՀԿ սեկտորի ներկայացուցիչները խորհրդարանական խմբակցություններին առաջարկել էին էթիկայի հանձնաժողով ստեղծել ու այդ հարթակում քննել հարցը: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է իրավապաշտպան Ջարուհի Հովհաննիսյանի հետ:

-Տիկին Հովհաննիսյան, ԿԸՀ գործող նախագահ Վահագն Հովակիմյանը կուսակցական գործունեությունը դադարեցրել է ԿԸՀ գործուղվելուց օրեր առաջ ընդամենը: Ինչքանո՞վ կարող է անկողմնակալ ու անկաշկանդ գործել. նա քաղաքական դեմք դարձել է գործող իշխանության ու բացառապես վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհիվ ու ջանքերով:

-Գաղտնիք չէ, որ Վահագն Հովակիմյանը Նիկոլ Փաշինյանի մերձավորներից է, որը խմբային շահը սպասարկելու համար շատ հարմար թեկնածու է: Ելնելով հանրային շահի եւ հանրային ինստիտուտների կայացման կարեւորությունից՝ այս ընտրությունը չի կարող համարվել ի շահ Հայաստանի Հանրապետության: Ընտրությունները ժողովրդավարական համակարգի կայացման առանցքն են, եւ եթե չլինի վստահություն այն ինստիտուտի նկատմամբ, որը լեգիտիմացնում է ընտրությունները, ապա ժողովրդավարության մասին խոսելն անիմաստ է դառնում: Բացի դա, Վահագն Հովակիմյանը, անձամբ մասնակցելով ԿԸՀ նախագահի պաշտոնում իր իսկ թեկնածության քվեարկությանը, խախտել է «ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ՝ շահերի բախմանն առնչվող հոդվածը, որում ասվում է, թե պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաեւ Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեեւ ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը՝ պաշտոնում նշանակմանը եւ այլն:

-Խնդիր չկա՞ արդյոք այն հանգամանքում, որ պատգամավոր Վահագն Հովակիմյանն ընտրել է ԿԸՀ անդամի թեկնածու Վահագն Հովակիմյանին, այսինքն՝ ինքն իրեն: Շահերի բախում չկա՞ այդտեղ:

-ԿԸՀ նախագահի պաշտոնում ընտրվելիս Վահագն Հովակիմյանը, դեռեւս չսկսած իր պաշտոնավարումը, իբրեւ պատգամավոր մասնակցել է քվեարկությանը՝ թույլ տալով շահերի բախում, օգտագործել է իր պատգամավորական մանդատը, որը իշխող կուսակցության ձայներին ավելացրել է վճռորոշ 65-րդ ձայնը: Ինչպես գիտեք, ԿԸՀ նախագահի ընտրության համար անհրաժեշտ էր առնվազն 65 ձայն, այսինքն՝ մեկ ձայնը, որը հենց իր՝ Վահագն Հովակիմյանի մանդատով է ձեւավորվել, վճռորոշ էր: Ակնհայտորեն կողմնակալ եւ ոչ արժանահավատ այս քվեարկությունը ստվերելու է առանց այդ էլ հանրային ոչ բարձր հեղինակություն ունեցող կառույցի հրապարակած տվյալների արժանահավատությունը: Այս մոտեցումն անկախ կառույցների ղեկավարների ընտրության տեսանկյունից անընդունելի է, քանի որ մենք գործ ունենք համակարգային խնդիրների հետ, եւ դրանք փոխարենը լուծվեն, ավելի են խորանում, ի սպառ խաթարվում է հանրային վստահության կարիքն ունեցող կառույցների հեղինակությունը:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՅՈՒՅՈՒՄ

ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԴԱՏԱՎՈՐՆ ՈՒ ՓԱՍՏԱԲԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններ համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազ Անա Վարդապետյանը դատախազների հետ աշխատանքային վերջին քննարկումներից մեկի ժամանակ խոսել է իր ուշադրության կենտրոնում գտնվող դատավորների ու փաստաբանների մասին՝ հայտնելով, որ որոշակի տվյալներ կան, թե փաստաբանները դատավորների հետ միջնորդավորված կապի մեջ են տարբեր բեռական վարույթներով:

Երեկ ԱԱԾ-ն մտավ դատարան եւ մինչդատական վարույթում գտնվող մի գործով դատավոր Արուսյակ Ալեքսանյանին եւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանին ձերբակալեց: Իսկ ինչո՞ւ հենց այս դատավորին եւ փաստաբանին: Հիշեցնենք, որ այս տարվա հուլիսին 22-ին ձերբակալվեց քրեական աստիճանակարգով ամենաբարձր կոչում ունեցող, «օրենքով գող» Լենականցի Սուրո մականունով Սուրեն Ավետիսյանը, եւ հիմա իրավապահները այս գործով դատավորի, փաստաբանի, քննիչի գործողություններում կասկածներ են ունեցել, ինչի համար հոկտեբերի 14-ին հենց Քննչական կոմիտեի իր սենյակում ձերբակալվեց Հատուկ կարեւորագույն գործերով քննիչ Վլադիմիր Ասատրյանը, իսկ երեկ էլ՝ դատավոր եւ փաստաբան Ալեքսանյանները: Իհարկե, մինչդատական վարույթում գտնվող գործերի նկատմամբ նորանշանակ դատախազի ուշադրությունը հատկանշական է, սակայն պետք է նկատի ունենալ, որ, դատավորներին, փաստաբաններին ու քննիչներին ձերբակալելուն զուգահեռ, անհրաժեշտ է քննության առարկա դարձնել նաեւ հենց դատախազների գործողությունները: Ոլորտի մասնագետները գիտեն, թե դատախազ-քննիչ-դատավոր եռյակի համագործակցության ինչպիսի դեպքեր կան, եւ որքան հիշարժան են դրանք: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում եւս աղմկահարույց ձերբակալություններ են սպասվում, քանի որ իրավապահ համակարգում ակտիվություն է նկատվում:

ԳՈՎԱԶԴԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Կառավարությունն առաջարկում է փոփոխություններ կատարել «Գովազդի մասին» ՀՀ օրենքում: Ըստ այդմ, նոր կատարվող փոփոխությամբ՝ դեղերը զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային, տպագիր եւ արտաքին գովազդային վահանակների միջոցներով գովազդելու դեպքում գովազդի վրա պետք է նշվեն դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման հավաստագրի համարը, ամսաթիվը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության համարն ու ամսաթիվը: Արգելվում է հսկվող դեղերի, դեղատոմսով բաց թողնվող դեղերի եւ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերի գովազդը:

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ 2022 թվականի հետազոտությունների արդյունքում Հայաստանում առաջատար դիրքը շարունակում է պահպանել հեռուստագովազդը, որը կազմում է բնակչության 27,8 %՝ հետեւում թողնելով համացանցը՝ 1,9 %, եւ արտաքին գովազդը (փողոցներում)՝ 1,4 % (ստորեւ ներկայացված է գծապատկերը, աղբյուր՝ «Բրեվիս» հետազոտական եւ մարքեթինգային ընկերություն):

Հավելենք, որ նախագիծն արդեն Ազգային ժողովում է եւ պետք է քննարկվի պատգամավորների կողմից:

ԿԱՄՈՒՐՋԸ ԲԱՑ Է

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարությունը տեղեկացնում է, որ Ղրիմի կամրջով արդեն կարող են նաեւ ավտոբուսները երթեւեկել: Ավելի վաղ, հիշեցնենք, լիազոր մարմինը հայտնել էր, որ կամուրջը բաց է միայն մարդատար մեքենաների համար:

Ղրիմի կամուրջը հոկտեմբերի 8-ին էր պայթեցվել: Բեռնատար մեքենայի պայթյունից այրվել էին նաեւ այդ պահին կամրջով անցնող բեռնատար գնացքի՝ վառելիքով լցված ցիստեռները: Պայթյունի հետեւանքով կամրջի երթեկելի որոշ հատված վնասվել էր, ասֆալտը պոկվել ու ծովն էր լցվել:

Այսօր, փաստորեն, պայթյունից 10 օր անց, կամրջով երթեւեկը վերականգնվել է:

Դրան զուգահեռ նշենք, որ մոտ տասն օր է, ինչ Երեւանի Բարեկամության էստակադան փակ է երթեւեկության համար: Այստեղ, իբրեւ թե, վերանորոգման աշխատանքներ են իրականացվում: Բացի անդադար խցանումները, որ առաջացել են երեւթեկության համար փակ կամրջի պատճառով, որեւէ դրական տեղաշարժ նկատելի չէ, ու հույս էլ չկա, թե առաջիկայում կամուրջը կարող է բացվել:

Թեեւ Երեւանի քաղաքապետարանն ասել է, որ մոտավորապես մեկ ամսից աշխատանքերն ավարտված կլինեն, բայց եթե այս տեմպերով շարունակվի, ապա Երեւանում երթեւեկող վարորդները մեկ ամսից էլ ավելի ազդանշաններ ու սուլոցներ կարձակեն:

Եթե անգամ ընդունենք, որ մեկ ամսից Բարեկամության էստակադան լիովին վերանորոգված կվերաբացվի, ապա փաստենք՝ Ռուսաստանը 10-ն օրում ամբողջովին վթարված կամուրջ է վերականգնում, Հայաստանը՝ մեկ ամսում կամրջի վրա նոր ասֆալտ փռում սոսկ:

ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Այսօր Երեւանի ավագանու հերթական նիստն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված է 15 հարց: Որոշումներից մեկով ««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխվելու է եւ «Լեւոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությանն է միանալու ու վերակազմակերպվի:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ««Քանաքեռ Զեյթուն» ԲԿ» ՓԲԸ-ն 2022 թվականի դեկտեմբեր ամսից անցնում է Երեւան համայնքի ենթակայության: Բուժհաստատությունը 2012 թվականից հանձնված է եղել հավատարմագրային կառավարման՝ ներդրումներ իրականացնելու, շենքային պայմանները բարելավելու, տեխնիկապես հագեցնելու պայմանով: Հավատարմագրային կառավարման ընթացքում բուժհաստատությունում կատարվել է ավելին քան 1.6 մլրդ դրամի ներդրումներ վերոնշյալ ուղղություններով:

Միաժամանակ նախատեսվում է ««Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ» ՓԲԸ-ում ներդրնել բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների նոր տեսակներ եւ վերջինս անվանափոխել՝ դարձնելով «Երեւանի ենթակայության «Երեւան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն»:

«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Թուրքիայի Ազգային մեժ ժողովի (խորհրդարան) արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Աքիֆ Չաղաթայ Քըլըչը հայտարարել է, որ Անկարան նորից կարող է դիմել «ֆուտբոլային դիվանագիտությանը» Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում:

«Մարտի 25-ին՝ Հայաստանում, եւ սեպտեմբերին Թուրքիայում տեղի կունենան երկու երկրների ֆուտբոլի հավաքականների խաղերը («Եվրո-2024»-ի որակավորման շջանակում): Մեր հավաքականը կգնա այնտեղ, գուցե մենք էլ գնանք: Կարգավորման գործընթացը դրական է ընթանում: Դրական դինամիկա նկատվում է նաեւ Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերություններում: Դա պետք է անել՝ չդիմելով սադրանքների»,- Քըլըչի խոսքերը մեջբերել է Star թերթը:

2008թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը եկավ Երեւան Հայաստանի այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով՝ մասնակցելու աշխարհի առաջնության ընտրական խաղին Հայաստանի եւ Թուրքիայի հավաքականների միջեւ: Ավելի ուշ Սարգսյանը Գյուլի առաջարկով մեկնեց Թուրքիա-Հայաստան պատասխան խաղը դիտելու, որը տեղի է ունեցել 2009թ. հոկտեմբերին Բուրսա քաղաքում: Այնտեղ էլ տեղի են ունեցել հայկական եւ թուրքական պատվիրակությունների բանակցությունները, որոնցից հետո՝ նախագահների հանդիպումը, հարաբերությունների կարգավորման գործընթացը, որն ավելի ուշ ընդհատվել է ղարաբաղյան հակամարտության պատճառով: Այն ստացել էր «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը:

ԵՄ ԴԻՏՈՐԴՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հոկտեմբերի 14-ին Երեւան է ժամանել ԵՄ դիտորդական մասնագիտական խումբը, որը պետք է նախապատրաստի այս ամիս սպասվող ԵՄ դիտորդների այցը. այն բաղկացած է 8-10 մասնագետներից: Այս մասին «Ազատությանը» հայտնել էր ՀՀ ԱԳ փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը:

Թե առաջիկայում Եվրամիության քանի դիտորդ կտեղակայվի հայ-ադրբեջանական սահմանին, առայժմ հայտնի չէ: Նշենք, որ Հայաստան Եվրամիության քաղաքացիական դիտորդական առաքելություն ուղարկելու մասին պայմանավորվածությունը ձեռք էր բերվել Պրահայում Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի ու Եվրոպական խորհրդի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանի, Իլհամ Ալիեւի, Էմանուել Մակրոնի եւ Շառլ Միշելի բանակցությունների արդյունքում:

Հայաստան ժամանած մասնագիտական խմբի այցին է անդրադարձել Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը՝նշելով. «Եվրամության անդամ 27 երկրներն արագ են գործել՝արձագանքելու Հայաստանի խնդրանքին: Եվրամիության տեղակայման նպատակն է դիտարկել իրավիճակը եւ գետնի վրա աջակցել հայ -ադրբեջանական հարաբերությունների կայունացմանը»:

Նկատենք՝ մինչ այս Բաքուն մերժել էր Հայաստանի հետ սահմանին զինված ուժեր տեղակայելու Եվրամիության առաջարկը, ապա ընդունեց քաղաքացիական առաքելության տարբերակը՝ ընդգծելով, թե կհամագործակցի «այնքանով, որքանով որ առնչություն կունենա»:

Իսկ ո՞ր տարածքներում են ԵՄ դիտորդներն առաքելություն իրականացնում եւ ի՞նչ հաջողություններ են գրանցել: ԵՄ-ն ներկայումս իրականացնում է յոթ ռազմական առաքելություններ եւ գործողություններ ցամաքում եւ ծովում: Դրանցից երեքը ռազմական ուսումնական առաքելություններ են, որոնք խորհրդատվություն եւ ուսուցում են տրամադրում տեղի անվտանգության ուժերին Մալիում, Սոմալիում եւ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում: Գործընկեր երկրներում գործում են նաեւ տասնմեկ քաղաքացիական առաքելություններ, որոնց օգնությունը կարեւոր դեր է խաղում սահմանների կառավարման, հակամարտությունների կանխարգելման, կազմակերպված հանցավորության եւ մաքսանենգության դեմ պայքարում: Փորձենք մի քանի երկրի օրինակով հասկանալ նրանց առաքելության հիմնական նպատակները:

Վրաստան

Եվրոպական դիտորդական առաքելությունը տեղակայվել է Վրաստանում 2008 թվականի սեպտեմբերին՝ԵՄ-ի միջնորդությամբ վեցկետանոց համաձայնագրից հետո, որով ավարտվեց օգոստոսյան ռուս-վրացական պատերազմը: Դիտորդական առաքելության նպատակներն են ապահովել, որ ռազմական գործողություններին վերադարձ չլինի, դյուրացնել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ վարչական սահմանագծերի (ABL) երկու կողմերում ապրող բնակիչների անվտանգ եւ նորմալ կյանքը, հակամարտող կողմերի միջեւ վստահության ձեւավորում:

Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ սահմանին իրականացվող աշխատանքներին ընդգրկված են շուրջ 200 դիտորդներ ԵՄ անդամ տարբեր երկրներից, գլխամասային գրասենյակը գտնվում է Թբիլիսիում, եւ կան գրասենյակներ Գորիում, Մցխեթայում եւ Զուգդիդիում: Ընդգծենք՝ԵՄ մանդատը գործում է միայն ողջ Վրաստանում: Սակայն Աբխազիայի եւ Հարավային Օսիայի դե ֆակտո իշխանությունները մինչ այժմ արգելել են նրանց մուտք գործել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներ:

Ուկրաինա

Այս տարվա փետրվարի 24-հետո, երբ Ուկրաինայի տարածքում ռազմական գործողություններ սկսվեցին, Եվրոպական Միության առաքելությունն այլեւս չի կարող ամբողջությամբ իրականացնել իր մանդատը Ուկրաինայի տարածքում: 2022 թվականի մարտին եւ ապրիլին ԵՄ անդամ երկրները նոր առաջադրանքներ են ներկայացրել այս կառույցին: Այժմ առաքելությունն աջակցություն է ցուցաբերում իրավապահ մարմիններին՝ հեշտացնելու Ուկրաինայից փախստականների հոսքը դեպի հարեւան անդամ երկրներ, եւ մարդասիրական օգնության մուտքը՝ Ուկրաինա: «ԵՄ խորհրդատվական առաքելություն-Ուկրաինա»-ն (EUAM Ukraine) ստեղծվել է 2014 թվականին, եւ Եվրոպայից երկիր են բերվել միջազգային խորհրդատուներ:

Առաքելություն եւ նպատակներ

EUAM-ի մանդատն իրականացնում է գործունեություն երեք սկզբունքների համաձայն՝

- ռազմավարական խորհրդատվություն քաղաքացիական անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ, մասնավորապես՝ քաղաքացիական անվտանգության ռազմավարությունների մշակման անհրաժեշտության մասին,
- աջակցություն բարեփոխումների իրականացմանը՝ գործնական խորհրդատվության, վերապատրաստման եւ այլ նախագծերի տրամադրման միջոցով:

Համագործակցությունն ու համակարգումը երաշխավորում են, որ բարեփոխումների ջանքերը համակարգվում են ուկրաինական եւ միջազգային դերակատարների հետ:

Լիբիա

2019 թվականի սեպտեմբերից առաքելությունը գտնվում է Տրիպոլիում, բայց ունի ենթաբաժին Թունիսում: 2021 թվականի հունիսի 18-ին խորհուրդը երկարաձգեց առաքելության մանդատը եւս երկու տարով մինչեւ 2023 թվականի հունիսի 30-ը՝ հաստատելով 84,85 միլիոն եվրոյի բյուջեն՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2023 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար: Ընդգծենք, որ քաղաքացիական առաքելությունները յուրաքանչյուր երկրում տեղակայվում են երկու տարով, եւ պետք է ամեն անգամ երկարաձգեն նրանց գործունեության ժամկետը: ԵՄ-ն աջակցում է Լիբիայի իշխանություններին՝ զարգացնելու սահմանների կառավարումն ու անվտանգությունը երկրի ցամաքային, ծովային եւ օդային սահմաններում: Որպես ճգնաժամային կառավարման քաղաքացիական առաքելություն՝ կարողությունների զարգացման մանդատով, այն օգնում է Լիբիայի իշխանություններին ռազմավարական եւ գործառնական մակարդակներում:

Ինչպես տեսնում ենք, այս եւ մյուս այլ դեպքերում ԵՄ դիտորդական, քաղաքացիական առաքելության նպատակն առաջին հերթին կայունության հաստատումն է, սակայն Հայաստանի պարագայում կայունությունը դիտորդների ներկայության պայմաններում ամեն դեպքում կախված է այն հանգամանքից, թե սահմանի որքան հատվածում են նրանք տեղակայվելու, եւ եթե լինեն խախտումներ, որն է լինելու դիտորդների դերը ու ԵՄ արձագանքը դրան: Ի վերջո, շատ կարեւոր հարց է՝նրանք տեղակայվելու են այժմ հաստատված սահմաններում, երբ ադրբեջանական զորքերը ՀՀ տարածքում են, թե վերջիններս պետք է վերադառնան ելման դիրքեր: Հավելենք, որ նախնական նրանք Հայաստանի սահմաններին կգտնվեն երկու ամիս:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հոկտեմբերի 24-28-ին արձակուրդ կմեկնի: Որոշման մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 16-րդ մասով, «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով եւ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր տեւողությամբ, 2022 թվականի հոկտեմբերի 24-28-ը ներառյալ:

2. Վահան Քերոբյանի արձակուրդում գտնվելու ընթացքում վերջինիս կփոխարինի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը»:

ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Սիսիան համայնքի ղեկավար, ՔՊ-ական Արմեն Հակոբջանյանի երդման արարողությունը իրավազոր չլինելու պատճառով հոկտեմբերի 15-ին չի կայացել: Համայնքապետի երդման արարողության օրակարգով արտահերթ նիստը, որը նշանակվել էր հոկտեմբերի 16-ին, կրկին հետաձգվել է հոկտեմբերի 18-ին՝ ժամը 11:00-ին:

ԽԱՌՆԱՇՓՈԹ

ԱԱԾ-Ն ՄՏԵԼ Է ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հոկտեմբերի 13-ին ՀՀ քննչական կոմիտեում իսկական խառնաշփոթ է եղել: Կոմիտեի աշխատակիցները աղմուկ են լսել: Պարզվում է՝ ԱԱԾ-ն է մտել կոմիտե եւ ՀԿԳ քննիչին հենց իր աշխատասենյակից տարել է: Իսկ ո՞վ է ԱԱԾ-ի կողմից կալանավորված հատկապես կարեւոր գործերով քննիչը: Վերջինս Վլադիմիր Ասատրյանն է, որը Քննչական կոմիտեում աշխատել է 2017 թվականից եւ զբաղեցրել է տարբեր պաշտոններ, 60.900 դոլար կաշառքի գործով ձերբակալվել է:

Օրերս ԱԱԾ-ն հայտնեց, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում ՀՀ քննչական կոմիտեից ստացված տվյալների հիման վրա ձեռնարկված բազմաբնույթ եւ արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Վ.Ա-ն, զբաղեցնելով ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով քննիչի պաշտոնը, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթով նախաքննության ընթացքում խարդախության մեջ մեղադրվող ամուսիններ Ա.Հ-ի եւ Ա. Ջ-ի օգտին գործողություններ կատարելու, մասնավորապես՝ նրանց քրեական հետապնդումը դադարեցնելու եւ քրեական վարույթը կարճելու համար 2021 թվականի սեպտեմբերի 23-ից հետո Գ.Մ-ի օժանդակությամբ մասմաս պահանջել եւ ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 24.738.798 ՀՀ դրամին համարժեք 60.900 ԱՄՆ դոլար կաշառք: Նույն միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ Վ.Ա-ն, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Կ.Խ-ի թոռան օգտին գործողություններ կատարելու, այն է՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու համար պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ 2.031.100 ՀՀ դրամին համարժեք 5.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Պարզվել է նաեւ, որ 2022 թվականի հուլիսի 22-ին Մասիս-Այնթապ ավտոճանապարհին նույն գործով մեղադրյալ Ա.Հ-ի վարած ավտոմեքենայով կատարված մահվան ելքով վրաերթի դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում Վ.Ա-ն, ի վնաս պետական եւ ծառայողական շահերի օգտագործելով իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունը, կաշառքգումարի դիմաց միջամտել է նախաքննությանը, որի արդյունքում Ա.Հ-ի նկատմամբ ընտրվել է անազատության հետ չկապված խափանման միջոց, որով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին, այն է՝ խաթարվել է արդարադատության շահը:

Վերը նշված դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 441-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կողմից իրականացված համակարգված քննչական գործողությունների արդյունքում Վ. Ա-ն, Ա. Հ-ն, Ա. Ջ-ն, Կ. Խ-ն եւ Գ. Մ-ն բերման են ենթարկվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե եւ ձերբակալվել են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՆՔՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Արաբկիր վարչական շրջանում օրերս խառնաշփոթ է եղել: Մասնավորապես, քաղաքացիները նկատել են, որ մի կին փորձել է իրեն ցած նետել:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ավելի ուշ դեպքի վայր են շտապել իրավապահները, եւ պարզվել է, որ ինքնասպանության փորձ կատարած քաղաքացին 26 տարեկան է եւ փորձել է շենքի 5-րդ հարկից ցած նետվելով ինքնասպանություն գործել: Իսկ թե ինչն է եղել պատճառը, դեռ հայտնի չէ:

ԿԲՈՂՈՔԱՐԿՎԻ

Ինչպես հայտնի է, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ԳՇ նախկին պետ Արտակ Դավթյանի եւ ՊՆ մյուս պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործը տեղափոխվել է Հակակոռուպցիոն դատարան: Երեկ Հակակոռուպցիոն դատարանում հերթական նիստն էր:

ArmLur.am-ն երեկ դատարանում էր եւ արձանագրեց, թե ինչպես նախկին նախարարին Ազգային անվտանգության ծառայությունից տեղափոխեցին Հակակոռուպցիոն դատարան, եւ ինչպես էին նախարարի հարազատները դիմավորում նրան դատարանի մուտքի մոտ:

Ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին:

Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը, իսկ մյուս անձինք ազատության մեջ են: Ջրուցեցինք Դավիթ Տոնոյանի փաստաբան Սերգեյ Հովհաննիսյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ սպասելիքներ ունեն իրենք դատարանից:

Ի դեպ, պաշտպան Սերգեյ Հովհաննիսյանը հայտնեց. «Հաշվի առնելով, որ Դավիթ Տոնոյանի եւ գործող անցնող մյուս անձանց վերաբերյալ գործով տեւական ժամանակ դատական նիստեր տեղի չէին ունենում, ուստի հարմար առիթ չէր ստեղծվում միջնորդություն ներկայացնել դատարան զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ Դ. Տոնոյանի տեսակցությունների վրա դրված սահմանափակումը վերացնելու մասին, ավելին՝ շուրջ մեկ տարի անց միայն դատարանը, այն էլ՝ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացրել մերձավոր ազգականների հետ Դավիթ Տոնոյանի տեսակցությունների եւ հեռախոսազանգերի վրա դրված սահմանափակումը վերացնելու մասին, սակայն նույն որոշմամբ դատարանը շարունակել է սահմանափակված պահել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ նրա տեսակցությունները եւ հեռախոսազանգերը, որի պատճառով դեռեւս հնարավոր չէ իրականացնել Դ. Տոնոյանի հանդիպումը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ: Հայտնում ենք նաեւ, որ դատարանի հիշյալ որոշումը կբողոքարկվի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԵՂԾ ՏԵՂԵԿԱՆՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Պարույր Ֆրունզիկի Սանոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, շահադիտական դրդումներից ելնելով, երկու եւ ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ 2022 թվականին փետրվարի 1-ից մինչեւ 2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում նախնական համաձայնության է եկել Երեւան քաղաքի բնակիչներ Նարինե Խաչատրյանի, Սաթենիկ Դեմիրչյանի, Արայիկ Օհանյանի հետ, որից հետո, պայմանավորվածության հանաձայն, խմբի անդամներով, միմյանց գործողությունները փոխլրացնելով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կողմից 1700-5000 եվրո արժողության գումարներ տալու դիմաց վերջինների անվամբ խմբի կազմում օգտագործելու նպատակով պատրաստել են իրավունք վերապահող փաստաթղթեր հանդիսացող, աշխատանք ունենալու, աշխատավարձի չափի, այլ եկամուտների, անշարժ ու շարժական գույքերի, մահվան եւ ամուսնության փաստը հաստատելու վերաբերյալ բովանդակությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող տեղեկանքներ եւ սեփականության իրավունքի վկայականներ, որոնք այլ փաստաթղթերի հետ հանձնել են քաղաքացիներին, իսկ վերջիններս դրանք տարել եւ ներկայացրել են Հայաստանի Հանրապետությունում գործող Իսպանիայի Թագավորության վիզաների կենտրոն այդկերպ այդ քաղաքացիների համար «Շենգենյան գոտու» երկրների մուտքի պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով: Երեւան քաղաքի տարածքում գործող Իսպանիայի Թագավորության վիզաների կենտրոն են ներկայացրել օտարերկրյա պետություններ մուտքի պատշաճ թույլտվություններ ստանալու համար կեղծ փաստաթղթերը եւ դրանով իսկ կազմակերպել են երկուսից ավել անձանց անօրինական միգրացիան:

Քրեական գործով 4 անձ մեղադրյալ է, նրանցից մեկը՝ կալանքի տակ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

Աժ նախկին պատգամավոր Հրանտ Դավթի Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

Արսեն Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ առաջին ատյանի դատարանը արդարացրել էր նախկին պատգամավորին, իսկ, ահա, Գլխավոր դատախազությունը չէր հաշտվել այս որոշման հետ եւ այն բողոքարկել էր ՀՀ վերաքննիչ դատարան: Արդյունքում ՀՀ վերաքննիչ դատարանը որոշել էր բեկանել գործը եւ ուղարկել նոր քննության: Մեզ հայտնի դարձավ, որ Հրանտ Դավթյանի այս գործը ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 45 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՐԱՏԵՍԱԿ ՍԽԱԼՆԵՐ

2021թ. փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով՝ Դիլիջան խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվեց 1984թ.-ին ծնված Դավիթ Սարգսյանը, որը Ն. Փաշինյանի եղբորորդի, ԱԺ նախկին պատգամավոր Սիփան Փաշինյանի մտերիմ ընկերն է: Դ. Սարգսյանը սահմանադրական հանրաքվեի (որը չկայացավ) Դիլիջանի շտաբի ղեկավարն էր: Դիլիջան համայնքի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դ. Սարգսյանը բարձրագույն կրթություն չունի, ավարտել է Դիլիջանի պետական քոլեջը, այժմ հեռակա սովորում է Հայաստանի եվրոպական համալսարանում: Իր անձնական գործում Դ. Սարգսյանը ջնջումներով է գրել իր ավարտած ֆակուլտետի՝ Տնտեսագիտականի անվանումը, փոքրատառով է գրել Դիլիջան քաղաքի անունը, իր սեռի վերաբերյալ նշել է՝ արու: Դ. Սարգսյանի՝ որպես համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամանակաշրջանում Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղ են գտնում նաեւ Դիլիջան համայնքի հետ կապ չունեցող լուրեր, տեղեկատվական նյութերում շատ են տարատեսակ սխալները: 2022թ. ապրիլին համայնքապետարանի կայքում հայտարարություն էր տեղադրված, որ «ՌԱՅՍ ԱՊ» կոշիկի արտադրամասի Դիլիջանի մասնաճյուղը փնտրում է աշխատակիցներ: Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության տվյալներով՝ Դիլիջան համայնքում տարիներ շարունակ ոչ մի քառակուսի մետր ցորեն չի մշակվում, սակայն համայնքապետարանի կայքում այժմ հայտարարություն է տեղադրված այն մասին, որ աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրին մասնակցելու համար, համաձայն այդ ծրագրի 9-րդ կետի, անհրաժեշտ է դիմում ներկայացնել համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին՝ դիմումում նշելով մշակվող /նախատեսվող/ ցորենի ցանքատարածության տեղը, մակերեսը, սորտերը, բանկային հաշվեհամարը: Կայքում տեղադրված է տեղեկատվություն այն մասին, որ հոկտեմբերի 8-ին եւ 9-ին «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ում կայացել է հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնություն՝ նվիրված հունահռոմեական ոճի ըմբիշ Գագիկ Մարկոսյանի հիշատակին, որը հաղթող էր ճանաչվել ՀՀ երիտասարդական բաց առաջնության 62 կգ քաշային կարգում: Նախ՝ այդ առաջնությունը ՀՈԱԿ-ում չի կայացել, լրատվության մեջ չի նշված, թե այդ հուշարմրցաշարը եղել է մանկապատանեկան, Գագիկ Մարկոսյանը որ թվականին է հաղթել ՀՀ երիտասարդական առաջնությունում, երբ է նա մահացել: Կայքում Դիլիջան համայնքի հետ կապ չունեցող այլ նյութեր եւս կան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՆԴԻՐՆԵՐ

50 ՀԱԶԱՐ ՌՈՒՍ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում հաստատված ՌԴ քաղաքացիներն այնքան էլ չեն սիրում խոսել իրենց՝ այդ երկիր տեղափոխվելու դատճառների կամ ընտրության մասին, իսկ խոսելիս էլ գերադասում են անանուն մնալ:



Վրաստանի ՆԳՆ կողմից հայտնած տեղեկությունների համաձայն՝ մարտ-հունիս ամիսներին Վրաստան ժամանած ռուսների 18%-ը մնացել է երկրում. դա գրեթե 50 հազար մարդ է: 2019 թվականին այս ցուցանիշը կազմել է ընդամենը 5 տոկոս: Նույն տվյալներով՝ սեպտեմբերի 21-ից 30-ը ՌԴ առնվազն 68 հազար քաղաքացի է մուտք գործել երկիր, իսկ ավելի քան 45 հազարը հեռացել է:

Անաստասիան այնքան էլ գոհ չէ Վրաստանում սպասարկման որակից, չնայած նշում է, որ համեմատաբար մատչելի է՝ չնայած տեղի ունեցած թանկացումներին: «Խցանումները մեծ խնդիր են, հին Թբիլիսիում ամենուր միայն նեղ փողոցներ են, եւ շատ երկար է տեւում մի վայրից մեկ այլ վայր գնալը: Վրացիները ինչպես վաստակում էին, այնպես էլ շարունակում են, իսկ գները բարձրանում են»,- պատմում է նա:

Պարզվում է՝ թանկացումներից առաջին հերթին բողոքում են հենց վրացիները: «Օրինակ՝ լավ լուծվող սուրճն արժե 7-10 լարի, որը կազմում է մոտ 1000-1400 դրամ: Ընթրիքը ռեստորանում՝ 60-80 լարի, որը կազմում է մոտավորապես 8000-11 հազար դրամ մեկ անձի համար»,- ասաց Սալոմեն:

Պաշտոնական տվյալներով՝ այս տարի Վրաստան այցելությունների քանակով առաջին տեղում հենց ռուսներն են: Այն, որ ռուսներն այստեղ գալիս են ոչ միայն արձակուրդի համար, վկայում են նաեւ այն տվյալները, որոնք հրապարակվել են: «Թրանսփարենսի ինթերնեշնլ-Վրաստան»-ի տվյալներով՝ մոտ 13500 ռուսական ընկերություններից կեսը գրանցվել է ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո: Մարտից հուլիս Վրաստանում գրանցվել է մինչեւ 6400 ռուսական ընկերություն, ինչը յոթ անգամ գերազանցում է նույնիսկ նախորդ տարվա տարեկան ցուցանիշները: Այն, որ Ռուսաստանի որոշ քաղաքացիներ տեղափոխվել են այստեղ ապրելու եւ բիզնեսով զբաղվելու համար, վկայում է նաեւ այն փաստը, որ այդ ընկերությունների 90%-ից ավելին անհատ ձեռնարկություններ են:

Ռուսաստանցիների, եւ միեւնույն ժամանակ հենց վրացիների հիմնական խնդիրներից մեկը բնակարանների գների կտրուկ բարձրացումն է: 2022 թվականի մարտից Թբիլիսիում բնակարանների գները գրեթե կրկնապատկվել են: Ռուսաստանից ժամանած Անդրեյը չնայած ապրում է ընկերոջ տանը, սակայն տեղյակ է բնակարանների գների կտրուկ թանկացումից: Նա կարողանում է Վրաստանից աշխատել հեռահար կերպով, չնայած աշխատավարձն ամեն դեպքում նվազել է: Եվ չնայած Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ առկա հարաբերություններին՝ վերջինս տեղացիների կողմից բացասական ոչինչ չի զգացել: «Ինձ հարմար է այստեղ, ես ոչ մի բացասական բան կամ ագրեսիա չեմ զգում տեղացիների կողմից: Միակ խնդիրն այն է, որ ընտանիքիս ոչ բոլոր անդամներն են ինձ հետ»,- նշում է նա:

Իսկ, ահա, Կատյան, որը մարտից է գտնվում Վրաստանում, մի քանի անգամ առնչվել է վատ վերաբերմունքի, իսկ, որպես պատճառ, նաեւ մատնանշեց իր ռուսական արտաքինը: «Մինչ այդ ես պայքարում էի ինքս իմ դեմ եւ փորձում էի չլքել երկիրը, սակայն արդեն անհնար էր: Բայց ես հասկացա, որ այդպես այլեւս շարունակել չեմ կարող: Ես երկու շաբաթ մնացել եմ Հայաստանում, ապա գնացքով եկել Թբիլիսի, սակայն իմ երեխան է մնացել ՌԴ-ում, եւ հիմա մտածում եմ նրան բերելու մասին»,- պատմեց նա:

Հավելենք, որ սեպտեմբերի 21-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից հայտարարված մոբիլիզացիան Ռուսաստանում հանգեցրեց արտագաղթի նոր ալիքի, բայց, պատերազմի սկզբի համեմատ, ռուսների ընտրությունը կրճատվեց. ԵՄ շատ երկրներ սահմանափակեցին վիզաների տրամադրումը, իսկ Լատվիան, Լիտվան, Էստոնիան եւ Լեհաստանն ամբողջությամբ արգելել են ռուսների մուտքը զբոսաշրջային ամենահայտնի տիպի վիզաներով: Ավելի ուշ նման որոշման մասին հայտարարեց Ֆինլանդիան: Հավելենք, որ, չնայած Վրաստանում ռուսների մեծ քանակությանը, մայրաքաղաք Թբիլիսիի պատերին ամենուր հակառուսական գրություններ են:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

2023–2025ԹԹ. ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Այսօր Երեւանի ավագանու հերթական նիստն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված է 15 հարց: Որոշումներից մեկով կհաստատվի Երեւան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

Երեւան քաղաքի 2023-2025թթ. եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար 106,334,807.6, 111,598,646.5 եւ 153,448,912.7 հազ. դրամ: Միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:

2023-2025թթ. ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

-գույքահարկ անշարժ գույքի մասով՝ համապատասխանաբար 10,483,933.6, 14,126,848.1 եւ 20,408,740.3 հազ. դրամ,

-գույքահարկ՝ փոխադրամիջոցների մասով՝ 13,347,128.5, 14,281,427.4 եւ 15,281,127.4 հազ. դրամ,

-գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 1,776,291.0, 2,116,406.6 եւ 2,539,179.2 հազ. դրամ,

-վարչական գանձումներ՝ 6,831,956.2, 7,493,765.4 եւ 8,254,845.9 հազ. դրամ,

-աղբահանության վճարներ՝ 4,412,060.9, 5,073,870.1 եւ 5,834,950.6 հազ. դրամ:

Ընդհանուր ծախսերը, ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների, կարելի է նկարագրել հետեւյալ խմբերով՝

-աշխատանքի վարձատրություն՝ 10 մլրդ 833 մլն 164 հազար դրամ, 11 մլրդ 289 մլն 631 հազար դրամ, 11 մլրդ 717 մլն 113 հազ. դրամ,

-ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերում՝ 11 մլրդ 196 մլն 058 հազար դրամ, 11,802,261.9, 10,783,422.3 հազ. դրամ,

-տոկոսավճարներ՝ 43,909.8, 57,741.9, 57,741.9 հազ. դրամ,

-սուբսիդիաներ՝ 45,473,187.0, 46,214,104.9, 47,151,462.1 հազ. դրամ,

-դրամաշնորհներ՝ 635,891.4, 715,886.9, 1,012,240.7 հազ. դրամ,

-նպաստներ՝ 869,345.9, 871,345.9, 874,995.9 հազ. դրամ,

-այլ ծախսեր՝ 26,857,777.0, 27,502,379.9, 61,238,446.3 հազ. դրամ,

-հիմնական միջոցներ՝ 18,188,868.0, 19,905,293.4, 29,373,490.3 հազ. դրամ,

-ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ (6,550,000.0), (6,460,000.0), (6,660,000.0) հազ. դրամ:

Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Սամվել Բաբայանը հերքում է, որ Արցախի կառավարությունից ստացել է 100 մլն դրամ վարկ: Թեեւ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը զանգահարել էր նրան՝ ճշտելու լուրի իսկությունը մինչեւ հրապարակումը, սակայն Բաբայանը չէր պատասխանել մեր հարցին: Ամեն դեպքում, հարգելով նրա անցյալը՝ տեղադրում ենք հերքումը, որ վարկ չի ստացել:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

Հայտարարություն

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին 2022թ. նոյեմբերի 4-ին, ժամը 15:00-ին Յուրի Սելիպանովի սնանկության գործով կառավարիչ Վ.Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Յուրի Սելիպանովի սեփականություն իրավունքով պատկանող հետեւյալ գույքի աճուրդային վաճառք՝բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ- 1. ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Չարենցի փող. 27ա շենքի բակում գտնվող ավտոտնակը/36.9 քմ./: Մեկնարկային գինը սահմանվում է 4 168 657 ՀՀ դրամ, Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1% չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Յուրի Սելիպանովի սնանկության հատուկ հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472304369220000 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝Վ. Էլոյանին / 041 44 58 57 /:

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Հայաստանի հազար խոշոր հարկատուների ցանկը դարձյալ գլխավորում է խոշոր հանքարդյունաբերող ընկերությունը: Խոսքը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մասին է: ՀՀ պետական գերատեսչությունները դուրս են մնացել հարկատուների ցանկից: Նշենք, որ ցանկի առաջին տեղում հայտնված ընկերությունն այս տարվա առաջին 9 ամիսներին պետական բյուջե կատարել է 129 մլրդ 693 մլն 71 հազար դրամ: Հանքարդյունաբերողին հաջորդում է «Գազպրոմ Արմենիա»-ն՝վճարած 41 մլրդ 802 մլն 341 հազար դրամով: Հազար խոշորների ցանկի երրորդ տեղում տեղական ծխախոտ արտադրող «Գրանդ Տոբակո»-ն է եւ պետական բյուջե կատարել է 32 մլրդ 472 մլն 255 հազար դրամի հարկային վճարումներ: «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ընկերությունը հայտնվել է ցանկի չորրորդ տեղում եւ վճարել 16 մլրդ 354 մլն 148 հազար դրամ: Ցանկի 5-րդ տեղում «ՄՏՍ Հայաստան» ընկերությունն է, որի կատարած հարկային վճարումները կազմել են 12 մլրդ 494 մլն 420 հազար դրամ: Հազար խոշոր հարկատուների ցանկի տասնյակում տեղ են գտել նաեւ բենզին ներմուծողները՝ «.Սի Փի Էս Էներջի»-ն ու «Ֆլեշ»-ը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Սի Փի Էս Էներջի գրուպը» պետական բյուջե կատարել է 11 մլրդ 826 մլն 135 հազար դրամի հարկ ու տուրք, իսկ «Ֆլեշ» ընկերությունը՝ 11 մլրդ 278 մլն 313 հազար դրամ: Ի դեպ, տեղեկացնենք, որ Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատը հազար խոշորների ցանկի 9-րդ տեղում է՝ վճարած 11 մլրդ 698 մլն 473 հազար դրամով:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

Գայանե Քաջիկի Ռեզյանին պատկանող՝ ստորեվ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 02.11.2022 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 11.03.2020թ. ՍՆԴ/0403/04/19 վճռով սնանկ ճանաչված Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ ստորեւ նշված շարժական գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապան Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից Աշխեն Արշակյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավադրված եւ Գայանե Քաջիկի Ռեզյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն Նորագյուղ թաղամաս 126/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը ((համաձայն գնահատման հաշվետվության շինության հնդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար), Սեփականության իրավունքի վկայական՝ 01072015-01-0151, տրված՝ 01.07.2015 թվականին, կադաստրային ծածկագիրը 01-006-0711-0073, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, հողամասի չափը՝ 0,010454 հա, իրավունքի տեսակը՝ սեփականություն):

Մեկնարկային գինը՝ 5,920,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով թիվ 2480103328850000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախորոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

01.11.2022 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մ Մեկնարկային գին՝5,760,000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արևմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արևմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

Մ Մեկնարկային գին՝4,640,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մ Մեկնարկային գին՝2,000,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

Մ Մեկնարկային գին՝1,680,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մ Մեկնարկային գին՝2,450,000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2186432:

Մ Մեկնարկային գին՝1,120,000 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

Մ Մեկնարկային գին՝7,400,000 ՀՀ դրամ:

Լոտ 8 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ եւ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Ելենա Շաշիբեկի Մելքոնյանին ու Սմբաթ Խաչիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա Օհանովի փողոց 40 շենք, 30 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝23032016-01-0102:

Մ Մեկնարկային գին՝25,117,500 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

Մ Մեկնարկային գին՝2,230,000 ՀՀ դրամ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Արշակունիների փողոց, 4 հասցեում գտնվող 374 ք.մ. բնակելի տուն, 9,1 ք.մ. /6,4 խ.մ./ պարիսպ եւ 0,0494 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35100000 ՀՀ դրամ:

Գույքը հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված է գրավատուների կողմից: ՀՀ քաղ. օր-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գույքի իրացումից հետո նոր սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել գույքը:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 03.11.2022թ.-ին եւ 04.11.2022թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am, www.llcbst.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈՒՇԵՐ

16 ՏԱՐԻ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒԹՈՒՇԻ

Հոկտեմբերի 15-ին սիրված երգչուհի Վարդուհի Վարդանյանի մահվան 16-րդ տարելիցն էր: Երգչուհին 16 տարի առաջ մահացել էր ավտովթարի հետեւանքով, երբ ընդամենը 30 տարեկան էր:

ArmLur.am-ը առանձնացրել է այն երգիչ, երգչուհիներին, որոնք հիշել են Վարդուհուն: Նրանք են Սիրուշոն, Անդրեն, Ջարուհի Բաբայանը, Մանե Գրիգորյանը, Հռիփսիմե Հակոբյանը եւ այլք:

Ի դեպ, նշենք, որ այս տարի լույս աշխարհ է եկել Վարդուհի Վարդանյանի թոռնուհին՝ կրտսեր Վարդուհին:

Նշենք, որ Վարդուհի Վարդանյանն իր անցած կարճ ճանապարհին հասցրել է մասնակցել մի շարք հեղինակավոր մրցույթ-փառատոնների: Նա Հայաստան է բերել 8-ից ավելի միջազգային բարձրագույն մրցանակներ ու պատվոգրեր:

1994-ին նա Ջազ-փոփ համույթի հետ մասնակցել է Սվերդլովսկի «Ասուպ» երաժշտական մրցույթին եւ արժանացել «Գրան-պրի»-ի:

1996-ին մասնակցել է «Յալթա-Մոսկվա տրանզիտ» երիտասարդ կատարողների մրցույթին եւ արժանացել է հատուկ մրցանակի: 1999-ին Ազգային երաժշտական մրցանակաբաշխության շրջանակներում Վարդուհին արժանացել է «Հայաստանի լավագույն երգչուհի» կոչմանը: 1999-ին մասնակցել է Բելոռուսի «Ջալատոյ Շլյագեր» մրցույթին, ուր արժանացել է երկրորդ մրցանակին: 2000-ին Մակեդոնիայի եւ Բուլղարիայի «Սլավյանսկիյ բազառ» եւ «Դիսքավրի» մրցույթներում արժանացել է երկրորդ տեղերին:

Նույն թվականին Մակեդոնիայում կազմակերպվել է մրցույթ բոլոր «Գրան-պրի» մրցանակակիրների միջեւ, ուր Վարդուհին արժանացել է առաջին մրցանակին, իսկ «Մորիե դռուզեյ» մրցույթում նա երկրորդն էր: 1997-ին Վարդուհին ամուսնացել է:

2003-ին Վարդուհին թողարկել է իր անդրանիկ եւ միակ ձայնասկավառակը՝ «Խառնաշփոթը», ուր ներգրավվել են նրա ճանաչված հիթերից 13-ը: Դրանցից մի մասի հիման վրա նկարահանվել է տեսահոլովակ: 2004-ին Վարդուհին ավարտել է գործունեությունը Երգի պետական թատրոնում եւ սկսել է դասավանդել թատրոնին կից ստուդիայում:

2006-ի հոկտեմբերի 14-ին երգչուհին նոր համերգաշարով պիտի մեկներ Մարտունի, սակայն Մարտունիից վերադարձի ժամանակ մառախուղի ու անձրեւների հետեւանքով անանցանելի դարձած ճանապարհին Վարդուհին չի նկատել շրջադարձը, Սեւան-Մարտունի-Գետափ մայրուղու 17-րդ կիլոմետրի վրա մեքենան կորցրել է կառավարումն ու շրջվել: Մեքենայի ուղեւորներ Եղիշե Վերդյանն ու Արման Խաչատրյանը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ Վարդուհու կյանքը փրկել չի հաջողվել:

2006-ին Ազգային երաժշտական մրցանակաբաշխության ժամանակ Վարդուհուն հետմահու շնորհվել է «Հայաստանի լավագույն երգչուհի» կուչումը:

Նույն թվականին, Ազգային երաժշտական մրցանակաբաշխության կոմիտեի որոշմամբ, սահմանվել է Վարդուհու անվան ամենամյա հատուկ մրցանակ:

2006-ին հիմնադրվել է «Վարդուհի Վարդանյան» հիմնադրամը, որի միջոցներով կյանքի են կոչվում Վարդուհու անավարտ գործերը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

51–ՐԴ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մարմնամարզության հավաքականն աշխարհի առաջնությանը կմասնակցի 5 մարզիկով:

Այս մասին գրում է Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիան:

Սպորտային մարմնամարզության 51-րդ աշխարհի առաջնությանը Հայաստանը կներկայացնեն Հարություն Մերդինյանը, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Արթուր Դավթյանը, Վահագն Դավթյանը, Արթուր Ավետիսյանը, Գագիկ Խաչատրյանը: Մարզիչը կլինի Հայկ Նազարյանը: Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերբոյանը կլինի մրցավարների շարքում:

Մարմնամարզության աշխարհի առաջնությունն այս տարի անցկացվում է անգլիական Լիվերպուլ քաղաքում: Այն կմեկնարկի հոկտեմբերի 26-ին եւ կեզրափակվի նոյեմբերի 7-ին:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Հայաստանն առաջին օլիմպիական ուղեգիրն է նվաճել Փարիզի ՕԽ-ի համար:

Հրաձիգ Էլմիրա Կարապետյանը Եգիպտոսում անցկացված գնդակային հրաձգության աշխարհի առաջնությունում զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը եւ Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճել:

Հայաստանի ներկայացուցիչը, օդամղիչ ատրճանակ, 10մ 60 կրակոց կանանց վարժությունում խոցելով 582 միավոր, 109 մասնակցից 7-րդ հորիզոնականով անցել էր եզրափակիչ փուլ: Եզրափակչում արդեն Էլմիրան բարելավել է դիրքերը եւ խոցելով 200.9 միավոր՝ զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը:

Հրաձգության Հայաստանի հավաքականը 3 մարզիկով է մասնակցել Կահիրեում անցկացված աշխարհի առաջնությանը:

Ատրճանակ ձեւում Հայաստանի մյուս ներկայացուցիչ Բենիկ Խլղաթյանը, խոցելով 576 միավոր, գրավել է 34-րդ հորիզոնականը, իսկ հրացան ձեւում Հայաստանը ներկայացնող Հրաչ Բաբայանը, խոցելով 625.3 միավոր, գրավել է 47-րդ հորիզոնականը:

ԼՈՒՐԵՐ

ՍԱՄԲՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Երեւանում անցկացվող սամբոյի աշխարհի առաջնության մրցումային վերջին օրը հայ սամբիստներին հաջողվել է նվաճել երեք բրոնզե մեդալ:

«Մնացականյան Արփինե - 50 կգ /բրոնզ/

«Նիկոյան Մեսրոպ - 64 կգ /բրոնզ/

«Հարությունյան Գոռ - 88 կգ/բրոնզ/:

Այս մասին հայտնում են Հայաստանի սամբոյի ֆեդերացիայից՝նշելով, որ եզրափակիչ գոտեմարտերը կսկսվեն ժամը 16:00-ին, որոնց կարելի է հետեւել նաեւ առցանց:

Այսպիսով, հայ սամբիստները Աշխարհի 2022թ. երիտասարդական առաջնության ընթացքում նվաճել են 20 մեդալ / 1 ոսկի, 2 արծաթ, 17 բրոնզ/:

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՆ

Սելենա Գոմեսն ու Հեյլի Բիբերն առաջին անգամ միասին լուսանկարվել են Լոս Անջելեսում ակադեմիայի թանգարանի երկրորդ ամենամյա «Գալա»-ին:

Գոմեսն ու Բիբերը մի քանի լուսանկար են արել միասին:

««Գալա»-ի ընթացքում Սելենան եւ Հեյլին միասին շատ հանգիստ էին: Նրանք երկուսն էլ հաղթահարել են դա եւ երջանիկ են»,- ասել է աղբյուրը:

2017 թվականին սկանդալի պատճառ դարձած Ջասթին Բիբերը միջոցառմանը չի մասնակցել: Նա, ըստ աղբյուրների, «շատ ուրախ է, որ նրանք բոլորը կարող են առաջ շարժվել, եւ որ կարող է խաղաղություն լինել»:

Աղջիկները միասին լուսանկարվել են այն բանից հետո, երբ Հեյլի Բիբերը ճշտել է իր ամուսնու հետ հարաբերությունների ժամանակագրությունը: Երկար ժամանակ ենթադրվում էր, որ Հեյլին երգչին տարել է Գոմեսի ձեռքից:

ՊԱՅՈՒՍԱԿԸ՝ 3100 ԴՈԼԱՐ

Balenciaga-ն վաճառքի է հանել սահմանափակ քանակով ձեռքի պայուսակների հավաքածու:

Քիմ Քարդաշյանը Փարիզի նորաձեւության շաբաթվա ընթացքում ներկայացել է Balenciaga-ի աշնանային հավաքածու 2022-ի ցուցադրությանը՝ փաթաթված դեղին եւ սեւ գույների համադրությամբ կպչուն ժապավենով: Նրա հանդերձանքը համալրվել է համապատասխան պայուսակով: Balenciaga-ն այժմ այն թողարկել է պայուսակը 3100 դոլարով:

Փոքրիկ ձեռքի պայուսակը, որը կոչվում է Hourglass Small Handbag in Box With Tape in Yellow, ձեռագործ է՝ պատրաստված Իտալիայում: Այն պատրաստված է հորթի մորթուց եւ կպչուն ժապավենից՝վրան արծաթյա «B» տարբերանշանով:

Հաճախ ապրանքանիշի հագուստներն ու պայուսակներն առաջինը ներկայացնում է Քիմ Քարդաշյանը:

● *Հոկտեմբերի 19-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ո՞ր լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստատությունում:

Գայանե Հունանյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը): Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ՀՀ կրթության գիտության մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե սոցիալական վճար վճարող վարձու աշխատողը միաժամանակ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ է մատուցում, արդյոք պայմանագրային եկամուտներից հաշվարկվո՞ւմ է սոցիալական վճար:

Սեւակ Մարգարյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-մասի համաձայն՝ սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտները: Միաժամանակ նույն օրենքի 2-րդ հոդվածում բերված են տվյալ օրենքում օգտագործվող հասկացությունները, որին համապատասխան՝ աշխատավարձը աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումները, ինչպես նաեւ պայմանագրային եկամուտն է:

ՀՀ հարկային ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, որպես ինքնազբաղված անձ ստացված եկամուտները: Տվյալ դեպքում ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստները չեն հանդիսանում սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գոռ Մինասյանը Բահրեյնի հավաքականի կազմում ռեկորդ է սահմանել եւ դարձել Ասիայի չեմպիոն:

Մանամա քաղաքում ընթացող առաջնությանը նա երկամարտում գրանցել է 452 կգ ու Ասիայի ռեկորդ սահմանել՝ գրավելով առաջին տեղը: Պոկում վարժությունում Գոռը բարձրացրել է 210 կգ, իսկ հրումում՝ 242:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: